

Հավելված  
ՀՀ կառավարության 2024 թվականի  
ապրիլի 12-ի N 519-Ն որոշման

«Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2023 թվականի  
սեպտեմբերի 28-ի N 1666-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ-  
ՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ  
ՄՊԱՍԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆՆԵՐԻ ՎԱՌԵԼԻՔԻ,  
ՅՈՒՂԵՐԻ ՈՒ ՔՍՈՒՔՆԵՐԻ ԾԱԽՄԻ, ԱՎՏՈԴՈՂԵՐԻ ՎԱԶՔԻ, ԿՈՒՏԱԿՉԱՅԻՆ  
ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ  
ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն չափորոշիչներով սահմանվում են Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական ավտոմեքենաների և այդ մարմիններին սպասարկելու նպատակով ձեռք բերվող ավտոմեքենաների վառելիքի և յուղերի ու քուրքների ծախսի, ավտոդողերի վազքի, կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմատիվները, որոնց միջոցով իրականացվում է փաստացի ծախսի հաշվարկը:

2. Գործառնական և հատուկ նշանակության սպասարկման ավտոմեքենաների չափորոշիչները սահմանվում են պետական մարմինների կողմից՝ այդ ավտոմեքենաների ձեռքբերման գործընթացի տեխնիկական առաջադրանքով:

## II. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆՆԵՐԻ ՎԱՌԵԼԻՔԻ ԾԱԽՄԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

3. Ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների (այսուհետ՝ ավտոմեքենա) վառելիքի նորմատիվային ծախսը հաշվարկելիս հիմք է ընդունվում արտադրող գործարանի կողմից տվյալ ավտոմեքենայի 100 կմ վազքի համար սահմանված վառելիքի ծախսի նորման:

4. Ավտոմեքենաների վառելիքի նորմատիվային ծախսը հաշվարկելիս կիրառվում են ուղղիչ գործակիցներ, հետևյալ պայմաններում՝

1) ձմեռային ժամանակահատվածում (շրջակա միջավայրի 0° C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում) աշխատանքի դեպքում՝ մինչև 10 %.

2) լեռնային տեղանքներում կախված ծովի մակերևույթից ունեցած բարձրությունից աշխատանքի դեպքում հետևյալ չափերով՝

	Տեղանքի բարձրությունը ծովի մակերևույթից (մետր)	Ավելացումը (%)
1	2	3
1.	1700-2000	10-15
2.	2001-ից ավելի	15-20

3) մինչև 500 հազար բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում՝ մինչև 10 %.

4) 500 հազարից ավելի բնակիչ ունեցող քաղաքներում աշխատանքի դեպքում՝ մինչև 15 %.

5) նոր և հիմնական նորոգում անցած ավտոմեքենաների և մոտոցիկլների առաջին հազար կիլոմետր վազքի դեպքում՝ մինչև 10 %.

6) 5 տարվանից ավելի շահագործվող ընդհանուր 100 հազ.կմ-ից ավելի վազք ունենալու դեպքում՝ մինչև 5 %, իսկ 8 տարվանից ավելի շահագործվող ընդհանուր 150 հազ.կմ-ից ավելի վազք ունենալու դեպքում՝ մինչև 10 %.

7) հատուկ նշանակության ավտոմեքենաների (պարեկային, հրշեջ, շտապօգնության, մեքենաբարձիչ մեքենաների և այլն), որոնք տրանսպորտային գործընթացն իրականացնում են մանևրելու ժամանակ բարձր արագությամբ, կտրուկ արգելակելով, հետընթացով և այլն, դեպքում՝ մինչև 20 %.

8) ծանր բնակլիմայական պայմաններում, ձնաքթի, առատ ձյան և այլ բնական աղետների դեպքում՝ մինչև 40 %.

9) կայանատեղում միացված օդորակիչ կիրառելիս, ինչպես նաև «Climate control» համակարգի (տարվա եղանակից անկախ) օգտագործելիս՝ աշխատող շարժիչով մեկ ժամվա պարապուրդի դեպքում՝ մինչև 10 %:

5. Միաժամանակ մի քանի ուղղիչ գործակիցներ կիրառելու դեպքում վառելիքի նորմատիվային ծախսը հաշվարկվում է հաշվի առնելով ուղղիչ գործակիցների գումարային մեծությունը՝ տոկոսային արտահայտությամբ:

6. Թեթև մարդատար ավտոմեքենաների վառելիքի նորմատիվային ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Q_H = 0,01 \cdot H_s \cdot S \cdot (1 + 0,01 \cdot D)$$

որտեղ՝

$Q_H$  – վառելիքի նորմատիվային ծախսն է արտահայտված լիտրով.

$H_s$  – արտադրող գործարանի կողմից ավտոմեքենայի 100 կմ վազքի համար սահմանված վառելիքի չափաքանակը, լ/100կմ.

$S$  – ավտոմեքենայի վազքը, կմ.

$D$  – ուղղիչ գործակիցը (մի քանի ուղղիչ գործակցի դեպքում՝ դրանց գումարային մեծությունը), %:

7. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատող գազաբալոնային ավտոմեքենաների գազի նորմավորված ծախսին թույլատրվում է հավելել բենզինի կամ դիզելային վառելիքի լրացուցիչ ծախս հետևյալ դեպքերում՝

1) տեխնիկական ներգործություն իրականացնելու նպատակով վերանորոգման տեղամաս մտնելու և դուրս գալու դեպքում՝ ամսական մինչև 5 լ մեկ գազաբալոնային ավտոմեքենայի համար.

2) ձմեռային ժամանակահատվածում (շրջակա միջավայրի  $0^{\circ} C$ -ից ցածր ջերմաստիճանի դեպքում) գազաբալոնային ավտոմեքենայի շարժիչի թողարկման համար՝ ամսական 20 լ մեկ ավտոմեքենայի հաշվով:

8. Սույն հավելվածի 5-րդ կետում նշված բոլոր դեպքերում գազաբալոնային ավտոմեքենաների հեղուկ վառելիքի ծախսի նորմավորումն իրականացվում է համապատասխան բազային բենզինային ավտոմեքենաների համար սահմանված չափերով:

### III. ԱՎՏՈՄԵԲԵՆԱՆԵՐԻ ՅՈՒՂԵՐԻ ՈՒ ՔՍՈՒՔՆԵՐԻ ԾԱԽՍԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

9. Ավտոմեքենաների յուղերի ու քսուքների ծախսի չափորոշիչները սահմանվում են վառելիքի ընդհանուր ծախսից 100 լիտրի հաշվարկով, տվյալ ավտոմեքենայի համար նախատեսված նորմաների համաձայն: Յուղերի ծախսի չափորոշիչները սահմանվում են լիտրերով՝ 100 լիտր վառելիքի ծախսի հաշվարկով, իսկ քսուքների ծախսի չափորոշիչները սահմանվում են կիլոգրամներով՝ 100 լիտր վառելիքի ծախսի հաշվարկով:

10. Ավտոմեքենաների յուղերի ու քսուքների ծախսի չափորոշիչները ըստ վառելիքի տեսակի ներկայացված են N 1 աղյուսակում:

11. 5 տարվանից ավելի շահագործման մեջ գտնվող կամ կապիտալ վերանորոգում անցած ավտոմեքենաների համար յուղերի և քսուքների ծախսի չափորոշիչներն ավելացվում են 20 տոկոսով:

12. Արգելակային, հովացման և այլ աշխատանքային հեղուկների ծախսը հաշվարկվում է արտադրող գործարանի կողմից նախատեսված շահագործման հրահանգներին համապատասխան չափաքանակով:

13. Քսուքների ծախսը ավտոմեքենաների դետալների հիմնական վերանորոգման ժամանակ հաշվարկվում է տվյալ ագրեգատի յուղման համակարգի մեկ լիցքավորման չափով:

#### Աղյուսակ 1

Յուղերի և քսուքների տեսակները	Չափման միավորը	Յուղերի և քսուքների ծախսի չափորոշիչները՝ 100 լ վառելիքի ծախսի հաշվարկով	
		բենզինով և գազով աշխատող ավտոմեքենաների համար	դիզելային վառելիքով և գազով աշխատող ավտոմեքենաների համար
Շարժիչային յուղեր	լիտր	2,4	3,2
Տրանսմիսիոն յուղեր	լիտր	0,3	0,4
Հատուկ յուղեր	լիտր	0,1	0,1
Պլաստիկ (թանձր) քսուք	կգ	0,2	0,3

**IV. ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՎՏՈԴՈՂԵՐԻ ՎԱՋՔԻ, ԿՈՒՏԱԿՉԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՄՈՒԲԼՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

14. Ավտոմեքենաների ավտոդողերի վազքի նորմատիվների հաշվարկման համար հիմք է ընդունվում արտադրող գործարանի կողմից սահմանված տվյալ ավտոդողի շահագործման վազքի նորման:

15. Օպերատիվ-ծառայողական ավտոմեքենաների, հրշեջ ծառայության ստորաբաժանումների հիմնական և հատուկ հրշեջ ավտոմեքենաների, փրկարարական ծառայությունների և ստորաբաժանումների օպերատիվ և փրկարարական ավտոմեքենաների ավտոդողերի վազքի նորմաները նվազեցվում են 30 տոկոսով:

16. Էլեկտրամոբիլների վազքի նորմաները մեկ լիցքավորման համար սպառված էլեկտրաէներգիայի (կՎտ) չափաքանակից կախված հաշվարկվում են արտադրող գործարանի կողմից սահմանված նորմատիվներին համապատասխան:

17. Ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների չափորոշիչները ներկայացված են N 2 աղյուսակում, իսկ էլեկտրամոբիլների մարտկոցների ծառայության ժամկետը հաշվարկվում է արտադրող գործարանի կողմից սահմանված ժամկետով:

18. Ավտոմեքենաների կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների չափորոշիչները նվազեցվում են էներգիայի սպառման լրացուցիչ աղբյուրով կահավորված տրանսպորտային միջոցների համար (ռադիոկայան, ազդանշանային-խոսող սարք և այլն) 30 տոկոսով և էներգիայի սպառման յուրաքանչյուր լրացուցիչ այլ աղբյուրի համար՝ 5 տոկոսով:

**Աղյուսակ 2**

N ը/կ	Ավտոմեքենայի տարեկան միջին վազքը (հազ. կմ)	Կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետը (տարի)	Ավտոմեքենայի միջին վազքը կուտակչային մարտկոցի ծառայության ժամկետի ընթացքում (հազ.կմ)
1.	7,5	4 տարի	30,0
2.	10,0	3 տարի 7 ամիս	36,0
3.	15,0	3 տարի	45,0
4.	20,0	2 տարի 8 ամիս	54,0

5.	25,0	2 տարի 5 ամիս	60,0
6.	30,0	2 տարի 3 ամիս	68,0
7.	35,0	2 տարի 1 ամիս	74,0
8.	40,0	2 տարի	80,0
9.	45,0	1 տարի 11 ամիս	85,0

#### V. ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

19. Պետական մարմինների համար նոր ձեռք բերվող ավտոմեքենաները պետք է բավարարեն հետևյալ չափորոշիչներին՝

- 1) ավտոմեքենայի վազքը չպետք է գերազանցի 1000 կիլոմետրը.
- 2) ավտոմեքենայի արտադրության տարեթիվը պետք է համընկնի ձեռքբերման տարեթվի հետ.
- 3) ավտոմեքենան պետք է համապատասխանի ԵԱՏՄ TPTC018/2011 տեխնիկական կանոնակարգի պահանջներին.
- 4) գնելու պայման պետք է հանդիսանա առնվազն 36 ամիս և (կամ) 150 000 կմ վազքի երաշխիքային սպասարկումը և հետերաշխիքային սպասարկումը՝ պայմանագրով նախատեսված սակագներով (մեխանիզմներով):
- 5) ավտոմեքենաների շահագործման ժամկետը չի կարող պակաս լինել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 3-Ն հրամանով սահմանված տրանսպորտային միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարեկան նորմային համապատասխան հաշվարկված ծառայության ժամկետից:

20. Սույն հավելվածի 19-րդ կետով նախատեսված չափորոշիչներից տարբերվող չափորոշիչներով սահմանված ծառայության ժամկետից պակաս ծառայության ժամկետ ունեցող հատուկ ավտոմեքենաների ձեռքբերման թույլտվությունը համապատասխան պետական մարմնի կողմից ներկայացված հայտի հիման վրա

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի առաջարկությամբ տպվի է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ